ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ**

# ՈՐՈՇՈՒՄ

N 92 ք.Արտաշատ

,,10,, 07 2018թ.

**ՄԱՐԶԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԻ, ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ ՈՒ ՎՆԱՍԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի ԺԲ/ ենթակետով և 68-րդ հոդվածի 6-րդ կետով՝

1.Հաստատել մարզի առողջապահության բնագավառի փակ բաժնետիրական ընկերությունների 2017 թվականի տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, շահույթներն ու վնասները՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել ընկերությունների 2017 թվականի տարեկան գործունեության արդյունքով առաջացած զուտ շահույթի վճարման և բաշխման ուղղությունները համաձայն հավելված 2-ի:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ.ՍԱՐԳՍՅԱՆ